

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԸՆԹԱՑԻՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎՎԵՆՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ**

Հաճախորդ	14 տարին լրացած ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ <sup>1</sup>	
Բանկային հաշվի բացում և սպասարկում	AMD/USD/EUR/RU/GBP/CNY/GEL/AED	սակագին չի սահմանվում
Տարեկան սպասարկում	AMD/USD/EUR/RU/GBP/CNY/GEL/AED	սակագին չի սահմանվում
Նվազագույն մնացորդ	AMD/USD/EUR/RU/GBP/CNY/GEL/AED	չի սահմանվում
Հաշվի բացման ժամկետ	Հաշվի բացման դիմումը ներկայացնելու օրվա ընթացքում	

**Վանխիկով գործարքներ <sup>2</sup>**

Վանխիկ միջոցների մուտքագրում հաշվին մասնաճյուղի դրամարկղում	✓ AMD/ GEL/AED	սակագին չի սահմանվում
	✓ USD	- մինչև 1996թ.-ը թողարկված USD թղթադրամներ չեն ընդունվում  - 1996թ.-ից մինչև 2006թ.-ի թողարկման 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամները <ul style="list-style-type: none"> <li>✓ մեկ հաճախորդի կողմից օրական մինչև 1,000 դոլար սակագին չի կիրառվում</li> <li>✓ 1,000 դոլարից ավել գումարի 1%</li> </ul>
	✓ EUR	- այլ թղթադրամի դեպքում սակագին չի սահմանվում - 500 EUR անվանական արժեքով թղթադրամի դեպքում 2% - այլ թղթադրամի դեպքում սակագին չի սահմանվում
	✓ RU	2%
	✓ GBP	5%

Միջոցների կանխիկացում <sup>3</sup>	✓ AMD	0,2% նվազագույնը 100 AMD
	✓ USD/EUR	1% նվազագույնը 1000 AMD
	✓ RU/ GEL/AED	Սակագին չի կիրառվում
	✓ GBP	5% նվազագույնը 1000 AMD

Հնամաշ թղթադրամների ընդունում և փոխանակում Հնամաշայն Բանկում գործող «Այլ ծառայությունների սակագների»

<b>Փոխանցումներ</b>			
<b>Հանձնարարականը մասնաճյուղում ներկայացնելու դեպքում</b>			
Ներբանկային փոխանցումներ <sup>4</sup>	AMD/USD/EUR/RU/GBP/CNY/GEL/AED	200 AMD	
Միջբանկային փոխանցումներ ՀՀ տարածքում	AMD (այդ թվում ՀՀ պետական և տեղական բյուջեներ) /USD/EUR	200 AMD	
<b>Հանձնարարականը Բնտերնետ/Մոբայլ բանկինգով ներկայացնելու դեպքում</b>			
Ներբանկային փոխանցումներ <sup>4</sup>	սակագին չի սահմանվում		
Միջբանկային փոխանցումներ ՀՀ տարածքում	սակագին չի սահմանվում		
Բնտերնետ/Մոբայլ բանկինգով «Փոխանցում քարտին» ծառայության միջոցով	0,25%		
Անճշտությունների ուղղում վճարման հանձնարարականի տվյալներում հաճախորդի դիմումի համաձայն	սակագին չի սահմանվում (swift-ի դեպքում՝ համաձայն «Ֆիզիկական և իրավաբանական անձ/ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից արտարժույթային միջազգային փոխանցումների իրականացման պայմանների և սակագների»)		
Գործող հաշվի վերաբերյալ քաղվածքների տրամադրում բանկի մասնաճյուղում	սակագին չի սահմանվում		
Փակված հաշվի վերաբերյալ քաղվածքի տրամադրում բանկի մասնաճյուղում	1000 AMD <sup>5</sup>		
Հաշիվների վերաբերյալ տեղեկանքների տրամադրում բանկի մասնաճյուղում	Համաձայն «Այլ ծառայությունների սակագների»		
Հաշվի օրական մնացորդի նկատմամբ կիրառվող տարեկան (պարզ) տոկոսադրույք և տոկոսային եկամտաբերություն <sup>6</sup>	Արժույթ	Տարեկան (պարզ) տոկոսադրույք	APY (տոկոսային եկամտաբերություն)
	AMD	5%	5,0%
	USD	0,5%	0,5%
	EUR	0,1%	0,1%
	RU	0,5%	0,5%
	GBP/CNY/GEL/AED	0%	0%

**! Ծանոթություն**

- 14-ից 18 տարեկան ֆիզ. անձի դիմելու դեպքում անհրաժեշտ է նաև ծնողների կամ հոգաբարձուի համաձայնությունը:
- Սակագնի կիրառման ժամանակ հիմք է ընդունվում տվյալ պահին գործող ՀՀ ԿԲ փոխարժեքը: Չինական յուան (CNY) արժույթով հաշիվներով իրականացվում են միայն անկանխիկ գործարքներ, կանխիկ գործարքներ չեն իրականացվում:
- Սակագինը չի տարածվում՝
  - ժամկետային ավանդի գումարի կանխիկացման դեպքում, բացառությամբ, եթե ժամկետային ավանդի պայմանագիրը լուծվել է ժամկետային ավանդը ներդնելուց հետո մինչև 30 օրվա ընթացքում:
  - Պարտատոմսերի կանխիկացման դեպքում
  - ժամկետային ավանդի և պարտատոմսերի համար վճարված տոկոսագումարի կանխիկացման դեպքում
- Փոխանցման հաշվի արժույթը տարբեր լինելու դեպքում իրականացվում է փոխարկում Բանկի սահմանած փոխարժեքով: Ներբանկային փոխանցումը իրականացվում է անմիջապես, Մինչև ժամը 15:30 ընդունված միջբանկային փոխանցումները իրականացվում են մինչև բանկային օրը: Ժամը 15:30-ից հետո կատարված փոխանցումները իրականացվում են հաջորդ բանկային օրը: Փոխանցվող գումարի ելքագրումը հաշվից իրականացվում է անմիջապես:
- <sup>5</sup>Ներառյալ ԱԱՀ
- <sup>6</sup>Տոկոսագումարը կապիտալացվում և վճարվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսի 15-ը:

# ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԸՆԹԱՑԻԿ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

1. Բանկային հաշիվները բացվում են ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի, Չինական յուան, Կրացական լարի, Ֆունտ ստերլինգ և ԱՄԷ դիրհամ արժույթներով:
2. Բանկային հաշիվները սպասարկվում են համաձայն Բանկում գործող «Ընթացիկ բանկային հաշիվների բացման և սպասարկման պայմանների և սակագներ»-ի (այսուհետ՝ Սակագներ), որը ներկայացվում է սույն տեղեկատվական ամփոփագրին կից Հավելված 1-ում:
3. Հաշվի օրական մնացորդի նկատմամբ Բանկը կարող է հաշվեգրել տոկոս՝ տվյալ ժամանակահատվածի համար Բանկում գործող Սակագներով և պայմանագրով սահմանված չափով, ընդ որում՝ օրական մնացորդ է համարվում տվյալ գործառնական օրվա ավարտին Հաշվի փաստացի մնացորդը: Հաշվում առկա գումարի վրա տոկոսները հաշվարկվում են գումարը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն հաճախորդին վերադարձնելու կամ հաճախորդի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Հաճախորդի բանկային հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/365 հարաբերակցությամբ, իսկ նահանջ տարվա համար 1/366 հարաբերակցությամբ: Տոկոսները հաշվարկվում են դրամական միջոցների չօգտագործված փաստացի մնացորդի նկատմամբ:
4. Եթե Բանկում ունեցած հաշիվների մնացորդների դիմաց հաշվեգրվում են տոկոսներ, ապա տոկոսագումարը հաշվեգրվում է յուրաքանչյուր ամիս: Հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են բանկային հաշվի արժույթով և կապիտալացվում են (փոխանցվում են) հաճախորդի նույն հաշվեհամարին մինչև հաջորդ ամսվա 15-ը:
5. Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
6. Բանկն իրավունք ունի հաճախորդի պահանջով վերջինիս բանկային հաշվից կանխիկ դրամական միջոցների տրամադրումն իրականացնել հաճախորդից համապատասխան հանձնարարականը ստանալու օրվան հաջորդող աշխատաքային օրը (բացառությամբ՝ շաբաթ և կիրակի օրերի), եթե պահանջվող գումարը գերազանցում է 5 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
7. Կանոններում, Պայմաններում և Սակագներում փոփոխությունների դեպքում, Բանկը պարտավորվում է փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ ծանուցել Հաճախորդին դրանց վերաբերյալ՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով: Տարեկան տոկոսային եկամտաբերության վրա ազդեցություն ունեցող փոփոխությունների դեպքում, Բանկը պարտավոր է ծանուցել Հաճախորդին դրանց վերաբերյալ՝ Բանկի և Հաճախորդի միջև կնքված համապատասխան պայմանագրով ընտրված հաղորդակցման եղանակով տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:
8. Հաճախորդի բանկային հաշվին մուտքագրված տոկոսագումարը ենթակա է հարկման եկամտային հարկով՝ ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով 10% տոկոսադրույքով:
9. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել բանկային հաշվի սպասարկումը և փակել հաշիվն առանց հաճախորդի համաձայնության, եթե Հաճախորդի հաշվին առկա դրամական միջոցները 12 (տասներկու) հաջորդական ամիսների ընթացքում չեն բավականացնում հաշիվը սպասարկելու, Սակագներով սահմանված վճարները գանձելու համար կամ գրոյական մնացորդով հաշվով չեն իրականացվել որևիցե գործարքներ: Սույն կետի իմաստով հաշվով գործառնություններ չեն համարվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց դրամական միջոցների գանձման, ինչպես նաև դատարանի վճռի հիման վրա հաշվից միջոցների բռնագանձման դեպքերը:
10. Հաճախորդը կարող է փակել բանկային հաշիվը Կանոններով սահմանված դեպքերում, Բանկի կողմից հաշվի փակման դիմումը ներկայացնելու օրը: Տվյալ դեպքում Հաճախորդը կարող է ստանալ հաշվում առկա դրամական միջոցները կանխիկ կամ անկանխիկ եղանակով փոխանցել դրանք այլ հաշվի՝ վճարելով Սակագներով սահմանված միջնորդավճարը:
11. Հաճախորդն ինքնուրույն տնօրինում է իր Հաշվում առկա դրամական միջոցները: Բանկն իրավունք չունի Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու Հաճախորդի իրավունքները սահմանափակել, բացի օրենքով, Կանոններով և

համապատասխան պայմանագրերով նախատեսված դեպքերի:

12. Հաշիվը տնօրինելու իրավունքը կարող է սահմանափակվել կամ հաշվից միջոցները բռնագանձվել առանց հաճախորդին նախապես տեղեկացնելու՝ ՀՀ դատական և այլ իրավասու մարմինների որոշմամբ, ինչպես նաև Բանկի կողմից, եթե հաճախորդը խախտում է Բանկի առջև ստանձնած վարկային կամ այլ պարտավորությունները: Հաշվի ապօրինի օգտագործման դեպքերում անհրաժեշտ է տեղեկացնել Բանկին՝ զանգահարելով (+374 10) 51 00 00 շուրջօրյա հեռախոսահամարով, կամ դիմելով Բանկին՝ Բանկում գործող և պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված կապի այլ միջոցներով: Ապօրինի օգտագործման մասին տեղեկացնելու դեպքում հաշիվը կարգելափակվի և Բանկը Հաճախորդի դիմումի հիման վրա կուսումնասիրի գործարքի մանրամասները և, անհրաժեշտության դեպքում, կսկսի գործարքի բողոքարկման գործընթացը:
13. Սույն ամփոփագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, «Ֆասթ Բանկ» ՓԲԸ բանկային և ավանդային հաշիվների բացման և վարման (սպասարկման) ընդհանուր կանոններով և հաճախորդի հետ կնքված պայմանագրով:
14. Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):
15. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:
16. APY՝ տվյալ ավանդատեսակի համար հաշվարկված ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունն է: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում: Հաշվարկվում է համաձայն ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգի:
17. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՄԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՍՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՍՈՒՑ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՍՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԵՏԵՎՅԱԼՆ Է.**

$$APY=(1+r/n)^n-1,$$

որտեղ՝

APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

r - տարեկան պարզ տոկոսադրույքն է:

n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

Օրինակ՝ «Ժամկետային ավանդ՝ տոկոսագումարների ամսական կապիտալացմամբ».

Ենթադրենք առաջարկվում է ավանդատեսակ հետևյալ պայմաններով՝ ա. Ավանդի գործողության ժամկետ՝ 1 տարի (365 օր)

բ. Տարեկան պարզ տոկոսադրույք՝ 7%

գ. Տոկոսների կապիտալացումների հաճախականությունը ամսական՝ տարվա ընթացքում 12 անգամ, յուրաքանչյուր ամսվա ժամանակահատվածի վերջում:

Ելնելով վերոնշյալ օրինակի պայմաններից և օգտվելով բանաձևից՝ կստանանք տարեկան տոկոսային եկամտաբերության չափը.

$$APY = (1 + 0.07/12)^{12} - 1, \text{ որտեղից՝}$$

$$APY = 0.072290 * 100 = 7.23\%$$

18. Ավանդը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

## ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՄՆ ԿԱՐԳԸ

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	<b>16 միլիոն ՀՀ դրամ</b>	<b>7 միլիոն ՀՀ դրամ</b>	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)

19. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի նկատմամբ ունեցած բողոք-պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին:

20. Տեղեկացնում ենք, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 100,000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ [www.fastbank.am](http://www.fastbank.am) կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն՝ (+37410) 510000 հեռախոսահամարով:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՄԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ**